ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ___42___- Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 13-Ի ԹԻՎ 17-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 17-Լ հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) Ուժը կորցրած ճանաչել՝

ա. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության պլանավորման բաժնի պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Գ-2)»,

բ. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության պլանավորման բաժնի ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-1)»,

գ. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության պլանավորման բաժնի հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-2)» Հրամանի հավելվածների գործողությունը.

2) Հրամանի 1-ին կետը լրացնել նոր հավելվածներով՝

ա. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժնի պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Գ-22)»,

բ. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժնի ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-21)»,

գ. «Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժնի հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-22)»:

հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 05.04.2024թ.

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
202 4 թ. 04. 05. N 42-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՀՐԱՀԱՆԳԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-21).

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ հրահանգիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Ավագ հրահագիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ հրահանգչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի հրահանգիչը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փողոց, 109/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Բաժնի պետին, Վարչության պետին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ տեղեկատվավերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով.
2. Աշխատանքներ է իրականացնում իր կարգապահական ու մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ.
3. իրականացնել Բաժնին հանձնարարված աշխատանքները, Բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
4. պարբերաբար Բաժնի պետին ներկայացնում է հաշվետվություն կատարված աշխատանքների ու ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
5. Վարչության պետի (տեղակալի), Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իր իրավասության շրջանակներում մասնակցել քաղաքացիական պաշտպանության բնագավառում Պաշտպանության նախարարության, Ոստիկանության ու Ազգային անվտանգության ծառայության և այլ մարմինների հետ փոխգործողությունների պլանների մշակման աշխատանքներին.

- իր իրավասության շրջանակներում մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը, ճշգրտել և մեթոդական օգնություն ցուցաբերել պետական կառավարման մարմիններին, Նախարարության և Ծառայության ստորաբաժանումներին քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքներին.
- իր իրավասության շրջանակներում մասնակցել Նախարարության, Ծառայության և Վարչության խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանները, ճշգրտել և մեթոդական օգնության ցուցաբերել ՀՀ պետական կառավարման մարմիններին, Նախարարության և Ծառայության ստորաբաժանումներին՝ այդ պլանների մշակման աշխատանքներին.
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման գործընթացների ու դրանց գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության թեմաներով ուսումնավարժությունների, Նախարարության անձնակազմի հետ անցկացվող առանձնացված շտաբային մարզումների նախապատրաստման և անցկացման աշխատանքները.
- ներկայացնել առաջարկություններ Ծառայության ստորաբաժանումների կողմից քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների վերաբերյալ.
- իր իրավասությունների շրջանակներում մասնակցել քաղաքացիական պաշտպանության վիճակի վերաբերյալ համապատասխան տվյալների (գրաֆիկական, հաշվարկային) և վերլուծական բնույթի այլ նյութերի մշակման աշխատանքներին.
- իրականացնել Վարչության քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորող փաստաթղթերի նախապատրաստման և դրանց անցկացման աշխատանքները.
- իրականացնել Նախարարի, Տնօրենի հրամանների նախագծերի պատրաստումը.
- իր իրավասությունների շրջանակներում մասնակցել նպատակային, գիտատեխնիկական, նորմատիվ իրավական և կազմակերպչամեթոդական ծրագրերի ու փաստաթղթերի մշակման աշխատանքներին.
- օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացնել Բաժնի պետին.
- մշակել Վարչության տարեկան, ամսական աշխատանքային պլանները.
- մշակել հաշվետվություններ Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
- մշակել ու պարբերաբար ճշգրտել Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.
- իր լիազորությունների շրջանակներում Ծառայության ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն.
- իրականացնել տվյալների հավաքագրման և մշակման, տեղեկատվական բազաների ստեղծման ու համալրման աշխատանքները.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացմանը.
- մասնակցել Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների համալիր ուսումնասիրություններին ու ստուգումներին.
- մասնակցել միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.
- Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները,

իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Քաղաքացիական կամ զինվորական բարձրագույն կրթություն.

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2.Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների

ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխգնդապետի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2024 թ. 04.05.հ N 42-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Գ-7):

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին և Վարչության պետի տեղակալին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի պետին անմիջականորեն ենթակա են բաժնի ծառայողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ հրահանգիչը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հրահանգիչը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փողոց, 109/8

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. կազմակերպում և ղեկավարում է Բաժնի գործունեությունը.
2. ստորագրում է Բաժնի անունից պատրաստված բոլոր փաստաթղթերը.
3. իրականացնում է Բաժնին հանձնարարված աշխատանքների կազմակերպումը. Բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
4. պարբերաբար Վարչության պետին հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքների ու բնագավառում տիրող իրավիճակի վերաբերյալ.
5. իր իրավասության սահմաններում Վարչության պետին միջնորդություններ է ներկայացնում ենթականերին պատասխանատվության ենթարկելու, խրախուսելու, հերթական կոչումներ շնորհելու և ծառայության հետ կապված այլ հարցերով.
6. անձնական պատասխանատվություն է կրում ղեկավարությանը զեկուցվող նյութերի օբյեկտիվության համար.
7. Վարչության պետի (տեղակալի) հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ:

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- մշակել քաղաքացիական պաշտպանության բնագավառում Պաշտպանության նախարարության, Ոստիկանության ու Ազգային անվտանգության ծառայության և այլ մարմինների հետ փոխգործողությունների պլանները.
- մշակել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը, ճշգրտել և մեթոդական օգնություն ցուցաբերել պետական կառավարման մարմիններին, Նախարարության և Ծառայության ստորաբաժանումներին քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման գործում.
- մշակել Նախարարության, Ծառայության և Վարչության խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանները, ճշգրտել և մեթոդական օգնության ցուցաբերել ՀՀ պետական կառավարման մարմիններին, Նախարարության և Ծառայության ստորաբաժանումներին՝ այդ պլանների մշակման գործում.
- կանոնակարգել քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման գործընթացների ու դրանց գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
- կազմակերպել քաղաքացիական պաշտպանության թեմաներով ուսումնավարժությունների, Նախարարության անձնակազմի հետ անցկացվող առանձնացված շտաբային մարզումների նախապատրաստման և անցկացման աշխատանքները.
- ներկայացնել առաջարկություններ Ծառայության ստորաբաժանումների կողմից քաղաքացիական պաշտպանության թեմաներով անցկացվող ուսումնավարժությունների վերաբերյալ.
- իր իրավասությունների շրջանակներում մշակել քաղաքացիական պաշտպանության վիճակի վերաբերյալ համապատասխան տվյալների (գրաֆիկական, հաշվարկային) և վերլուծական բնույթի այլ նյութեր.
- կազմակերպել Վարչության քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորող փաստաթղթերի նախապատրաստման և դրանց անցկացման աշխատանքների իրականացումը.
- մասնակցել քաղաքացիական պաշտպանության համակարգի վիճակի համալիր գնահատման կազմակերպմանը և վիճակի բարելավման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.
- կազմակերպել Նախարարի, Տնօրենի հրամանների նախագծերի պատրաստումը.
- մշակել նպատակային, գիտատեխնիկական, նորմատիվ իրավական և կազմակերպչամեթոդական ծրագրերը ու փաստաթղթերը.
- օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացնել Վարչության պետին.
- համակարգել և հսկողություն սահմանել Վարչության տարեկան, ամսական աշխատանքային պլանների մշակման ու կատարման գործընթացը.
- մշակել հաշվետվություններ Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
- մշակել ու պարբերաբար ճշգրտել Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.
- իր լիազորությունների շրջանակներում Ծառայության ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն.
- կազմակերպել և իրականացնել տվյալների հավաքագրման և մշակման, տեղեկատվական բազաների ստեղծման ու համալրման աշխատանքները.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացմանը.
- մասնակցել Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների համալիր ուսումնասիրություններին ու ստուգումներին.
- մասնակցել միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.
- Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:
- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության գլխավոր պաշտոնների խմբում կարող է նշանակվել այն անձը, ով վերջին երկու տարում զբաղեցրել է փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայորից ոչ ցածր կոչում կամ հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գնդապետի կոչում:

Հավելված
հաստատված է Ներքին գործերի նախարարի
2024 թ. 04. 05 թ. N 42-Լ հրամանով

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՀՐԱՀԱՆԳԻՉ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության քաղաքացիական պաշտպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բաժնի (այսուհետ՝ Բաժին) հրահանգիչ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.8-Ա-22).

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի հրահանգիչն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Բաժնի հրահագիչը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի հրահանգչի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի ավագ հրահանգիչը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Դավիթաշեն վարչական շրջան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փողոց, 109/8:

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1. Բաժնի պետին, Վարչության պետին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ տեղեկատվավերլուծական համակարգչային ծրագրերի միջոցով.
2. Աշխատանքներ է իրականացնում իր կարգապահական ու մասնագիտական որակների բարձրացման ուղղությամբ.
3. իրականացնել Բաժնին հանձնարարված աշխատանքները, Բաժնի և Վարչության գործառույթներին համապատասխան՝ իր պաշտոնի անձնագրով նախատեսված իրավասությունների կատարումը.
4. պարբերաբար Բաժնի պետին ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների ու ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
5. Վարչության պետի (տեղակալի), Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

Իրավունքները՝

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը.
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչման՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

Պարտականությունները՝

- իր իրավասության շրջանակներում մասնակցել քաղաքացիական պաշտպանության բնագավառում Պաշտպանության նախարարության, Ոստիկանության ու Ազգային անվտանգության ծառայության և այլ մարմինների հետ փոխգործողությունների պլանների մշակման աշխատանքներին.

- իր իրավասության շրջանակներում մասնակցել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության հանրապետական պլանը, ճշգրտել և մեթոդական օգնություն ցուցաբերել պետական կառավարման մարմիններին, Նախարարության և Ծառայության ստորաբաժանումներին քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքներին.
- իր իրավասության շրջանակներում մասնակցել Նախարարության, Ծառայության և Վարչության խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանները, ճշգրտել և մեթոդական օգնության ցուցաբերել ՀՀ պետական կառավարման մարմիններին, Նախարարության և Ծառայության ստորաբաժանումներին՝ այդ պլանների մշակման աշխատանքներին.
- իրականացնել քաղաքացիական պաշտպանության թեմաներով ուսումնավարժությունների, Նախարարության անձնակազմի հետ անցկացվող առանձնացված շտաբային մարզումների նախապատրաստման և անցկացման աշխատանքները.
- իր իրավասությունների շրջանակներում մասնակցել քաղաքացիական պաշտպանության վիճակի վերաբերյալ համապատասխան տվյալների (գրաֆիկական, հաշվարկային) և վերլուծական բնույթի այլ նյութերի մշակման աշխատանքներին.
- իրականացնել Վարչության քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորող փաստաթղթերի նախապատրաստման և դրանց անցկացման աշխատանքները.
- իրականացնել Նախարարի, Տնօրենի հրամանների նախագծերի պատրաստումը.
- իր իրավասությունների շրջանակներում մասնակցել նպատակային, գիտատեխնիկական, նորմատիվ իրավական և կազմակերպչամեթոդական ծրագրերի ու փաստաթղթերի մշակման աշխատանքներին.
- օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված խնդիրների իրականացման նպատակով համապատասխան առաջարկությունների ներկայացնել Բաժնի պետին.
- մշակել Վարչության տարեկան, ամսական աշխատանքային պլանները.
- մշակել հաշվետվություններ Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
- մշակել ու պարբերաբար ճշգրտել Վարչության անձնակազմի ազդարարման և հավաքի սխեմաները.
- իր լիազորությունների շրջանակներում Ծառայության ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն.
- իրականացնել տվյալների հավաքագրման և մշակման, տեղեկատվական բազաների ստեղծման ու համալրման աշխատանքները.
- իր իրավասությունների սահմաններում մասնակցել քաղաքացիական պաշտպանության բնագավառում միջազգային համագործակցության իրականացմանը.
- մասնակցել Ծառայության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների համալիր ուսումնասիրություններին ու ստուգումներին.
- մասնակցել միջազգային սեմինարներին, խորհրդակցություններին և վարժանքներին.
- Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնել օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.
- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.
- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.
- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.
- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.
- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.
- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին.

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության մայորի կոչում: